



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

# ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

## ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՑՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍ ՅԻՍՍՈՒՆԵՐԿՈՒՆԵՐՈՂ

29 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1872



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Թ. Յ. ԳՆԻՐՏԵԱՆ

— 1872 —



# ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ԲՍՑՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ԾԲ.

29 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1872

ՆԱԽԱԳԱՀ. — ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԲ

ԱՏԵՆԱՊԵՏ. — ԵՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՑ. ( Առժամանակեայ կարգեալ )

## ԿԱՐԳ ԽՆԴՐՈՑ

- 1° Վաւերացումն նորընտիր երեսփոխանաց :
- 2° Ընտրութիւն Բաղաքական Ժողովոյ 4 անդամոց :
- 3° Կոնգակ Վ.ԵՆ. Կաթողիկոսի :
- 4° Ատենական Կանոնադրութիւն :
- 5° Վերաքննութիւն Սահմանադրութեան :
- 6° Հարցումն ինն երեսփոխանաց :
- 7° Առաջարկութիւն տասն եւ եօթն երեսփոխանաց Սահմանադրութեան վերաքննութիւնը Մասնաժողովոյ մը յանձնելու համար :

Ժողովոյ առաջին եւ երկրորդ Ատենապետները միանգամայն այս աւուր նիստէն բացակայ էին, իսկ երրորդ Ատենապետ Խոճասարեան Սգսէն էֆ. թէև ներկայ սակայն անձնական տկարութիւն յայտնելով ինչոքեց որ Ատենապետութենէ ներուի այսօր եւ առաջարկեց որ Ժողովն՝ առժամանակեայ Ատենապետ մը կարգէ, ինչպէս սովորութիւն է այսպիսի պարագայից մէջ : Հետեւապէս Ատենապետի Եուսուֆեան էֆ. Ժողովոյ կամաց համաձայն եւ Սրբազան Նախագահ Հօր հրաւիրանօք Ատենապետի աթոռը անցնելով ժամ 8 ին ատենը բացաւ ի ներկայութեան 47 երեսփոխանաց, որոց թիւը ՚ի վերջէ թէպէտ 32 ի հասաւ, բայց եւ այնպէս Ժողովը չկրցաւ մեծագոյն մաս գանել :

Ատենապետ էֆ. նախորդ նիստին հակիրճ նկարագիրն ընելով յիշեցուց Ժողովոյն թէ նոյն օրը մեծագոյն մասի չզոյութեան պատճառաւ

Քաղ. Ժողովոյ չորս անդամոց ընտրութիւնն առկախ մնացեր եւ միայն Վ.ԵՆ. Կաթողիկոսի կոնգակին վրայ սկսուած վիճարանութիւնը շարունակուեր է, առանց վախճան մը գանելու, եւ յետոյ ծանուցանելով թէ Ժողովը տակաւին իւր մեծագոյն, մասը չունի նոյն ընտրութիւնը կատարելու համար, Վ.ԵՆ. Կաթողիկոսի կոնգակին վրայ վիճարանութիւնը բացուած հրատարակեց :

ԿՈՆԳՍԿ Վ.ԵՆ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ՄԱՋԼՈՄԵԱՆ Յ. ԷՑ. — Պարտաւորութիւն մը ունիմ անդրժելի, զոր կը ցանկամ ամենէն առաջ կատարել հոս այս ատենին մէջ, Իւսկիւտարի Սէլամիէ թաղի հասարակութեան քուէն դիւ երկրորդ անգամ կը կոչէ երեսփոխանական այս բարձր պաշտօնին՝ զոր երբեմն վարած էի :



Եթէ այս պաշտօնէն անցեալներն հրաժեշտ տուի կրկին ընարուելու վառասիրութիւնը չ'ունէի, բայց պարագաներն ստիպած էին զիս այնպէս շարժիլ:

Արդարեւ պարագաներ կան՝ որ շատ անգամ կ'ստիպեն զմարդ հասարակայնն պաշտօնէ մը հեռանալ. կան պարագաներ ալ, որ կը հարկադրեն զինքը ընդունիլ առաջարկուած պաշտօնը պէտք եղած ծառայութիւնը մատուցանելու յուսով: Այս կերպով հրաժարեցայ, եւ այս կերպով յանձն կառնուիմ կրկին ինձ յանձնուած պաշտօնը. եւ շնորհակալ եմ յոյժ այն համակրութեան համար որու մէկ նոր ապացոյցը՝ Սէլամիէ թաղի հասարակութիւնը ինձ կուտայ վերստին:

Եւ հիմա որ այս պարտքս կատարեցի կը դառնամ օրուան խնդրոյն, սակայն թող ներէ ինձ ժողովը որ հարցում մ'ընեմ նախ, զոր անշուշտ հարկ չ'պիտի լինէր ուղղել, եթէ նախորդ նիստերու ասենադրութիւնները պատրաստ լինէին Ա.Ե.Ն. կաթուղիկոսի կոնդակին վրայ վիճաբանութիւն մը բացուած է, եւ քանի մը նիստերէ 'ի վեր կը շարունակի: Բայց միթէ ներեւի՞ է այդ կոնդակին բոլոր կէտերուն վրայ խօսիլ, եթէ ոչ ժողովը որոշում մ'ունի անոր այս կամ այն կէտին վրայ եւ եթէ վիճաբանելու:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Ժողովը՝ ինչպէս արդէն յիշեցի, ո'չ Ա.Ե.Ն. կաթուղիկոսի կոնդակին վրայ որոշում մ'ըրած է եւ ո'չ ալ վիճաբանութիւնը սահմանի մը ներքեւ պարտակած. ուր ամէն մէկ երեսփոխան կրնայ կոնդակին բովանդակութեան վրայ ամբողջապէս իր բառերով խօսիլ, եւ կարծիքն ու դիտողութիւնները յայտնել: Միայն քանի մ'առաջարկութիւններ կան. առաջարկութիւն Ա.Ե.Ն. կաթուղիկոսին կողմանէ ուղուած երկու պատգամաւորները զրկելու, բայց ո'չ լիազօր արտօնութեամբ, առաջարկութիւն պատգամաւոր չը զրկելու եւ Ա.Ե.Ն. կաթուղիկոսին գրելու թէ Ընդհ. ժողովոյ ընթացքը՝ կիլիկիոյ կաթուղիկոսի ընտրութեան խնդրոյն մէջ բացառիկ է եւ իբր կանոն չկրնար նաեւ ապագային համար գործադրելի ըլլալ, առաջարկութիւն մ'ալ կայ Գրեանին կողմանէ խնդիրը նախապէս Յանձնաժողովոյ մը քննութեան եւ դիտողութեան յանձնելու համար, եւ ասոնցմէ զատ կայ կարծիք մ'ալ որ այս առաջարկութիւններն չուզէր ընդունիլ եւ Ա.Ե.Ն. կաթուղիկոսին կողմէ՝ Տանկաստանի հայերէն պատգամաւոր ուղուիլ:

խնդրոյն պարագաներուն հետ անհամաձայն կը գտնէ:

Ահաւասիկ այս վիճակին մէջ է խնդիրը, որ վիճաբանութեան բովէն անցնելով լոյս եւ որոշում պիտի գտնէ:

ՄԱՋԱԸՄԵԱՆ Յ. ԷՖ.— Ուրեմն քանի որ որոշում մը չկայ դեռ, խնդիրը պէտք է ընդարձակ կերպով ուշադրութեան առնուի:

Կիլիկիոյ կաթուղիկոսին ընտրութեան առթիւ Ա.Ե.Ն. կաթուղիկոսին կողմանէ ուղղուած հեռագրին՝ Ազգ. Վարչութիւնը պատասխան մը տուած էր: Այս պատասխանին յաջորդեց Ա.Ե.Ն. կաթուղիկոսի կոնդակը: Եւ թէ եւ երկու պատգամաւոր ուղէր էր Նորին Վեհափառութիւնը, բայց այս չէ միայն խնդրոյ նիւթ: Ա.Ե.Ն. կաթուղիկոսն Ազգ. Վարչութեան պատասխանը խնդրոյն վիճակին համաձայն եւ ուղիղ մտօք գրուած չգանելով՝ կրէ միանգամայն որ եթէ երեսփ. ժողովն յամառի իւր սխալանաց մէջ, ինք ալ Եկեղեցական Ընդհանուր մեծ ժողովը պիտի դուժարէ, բայց նախ եկեղեցւոյ հակառակորդները դատելու համար: Սպառնալիք մ'է այս, եւ հարկ է որ Ընդհ. ժողովն անկէ զերծ մնալու համար մտածէ թէ առ յայտն ինչ ընթացք պիտի բռնէ կիլիկիոյ կաթուղիկոսի ընտրութեան խնդրոյն մէջ: Երբ այս կէտը պարզուի այնուհետեւ կը մնայ ուրիշ կարեւոր կէտ մը, այն է որոշել թէ Ա.Ե.Ն. կաթուղիկոսի հետ կատարուելիք քանակցութիւնն ինչ նիւթերու վրայ պիտի լինի. վասն զի կիլիկիոյ կաթուղիկոսի վաւերացման խնդրէն զատ. նաեւ կաթուղիկոսական աթոռոյ՝ որոյ մէջ կը գրտնուի նաեւ Արարատեան Մայր Աթոսն ալ, ընդհանուր բարեկարգութեանց եւ փոխադարձ յարաբերութեանց խնդիրներն ալ կան, որք ուշադրութեան արժանի են: Իսկ թէ այս քանակցութիւնը գրաւոր պիտի լինի, թէ պատգամաւորներու թերնով, ըստ իս այս երկրորդական խնդիր է եւ աւելորդ է այժմէն անոր վրայ խորհիլ, մինչդեռ մեր քանակցութեան այն նիւթերն՝ որք բազմաճղի են, տակաւին պարզուած չ'են:

Ասոնք են ահաւասիկ իմ դիտողութիւններս զորս ժողովոյդ կը ներկայացնեմ խոնարհաբար:

ՊԵՎԵԱՆ Թ. ԷՖ.— Օրուան կարգին մէջ Ա.Ե.Ն. կաթուղիկոսի վերնագրով նշանակուած է այն խնդիրը, որոյ ծագումը՝ ինչպէս Երեսփ. ժողովը քաջ կը յիշէ, կոնդակէն խիստ հին է: Նախ՝ Սոյ կաթուղիկոսի ընտրութիւն մը

կայ կատարուած, երկրորդ՝ հեռագիր մ'եկած է Ա.Ե.Ն. կաթուղիկոսին կողմանէ, երրորդ՝ պատասխանագիր մ'ունի Ազգ. Վարչութիւնն՝ որուն յաջորդած է 'ի վերջոյ Ա.Ե.Ն. կաթուղիկոսի կոնդակը: Ժողովին վիճաբանութիւնը չէ թէ միայն կոնդակին վրայ պիտի ամփոփուի, այլ պիտի տարածի այս չորս կէտերուն վրայ. 2է թէ Ա.Ե.Ն. կաթուղիկոսին կոնդակը, այլ մանաւանդ Ազգ. Վարչութեան պատասխանագիրը պիտի քննադատեմք, պատասխանագիր մը որ այդ կոնդակն յատուց բերած եւ տեղի տուած է Ա.Ե.Ն. կաթուղիկոսին երկու պատգամաւոր ուղղելու, եւ որ վերջապէս այսչափ յուզում յարոյց Այո՛, իրաւունք ունիմք Ազգ. Վարչութեան այդ գիրը քննադատելու, եւ ես ահաւասիկ այդ քննադատութեան մէկ մասը կը կատարեմ: Ազգ. Վարչութիւնը՝ չգիտեմ ո՛ւրիշ իրաւունք կառնու Ա.Ե.Ն. կաթուղիկոսին սա խօսքերը գրելու, « Ահա այժմ ուրախութեամբ կը տեսնեմք որ մեր յոյան 'ի դերեւ չէ ելած, զի 2եր Վեհափառութիւնը Սոյ կաթուղիկոսական խնդրոյն առթիւ կը քանայ սոյն յարաբերութեանց խնդիրն, եւ իւր հեռագրին մէջ կը ծանուցանէ թէ իւր նախագահութեամբը դուժարեալ Եկեղեցական ժողովոյ մէջ պէտք է որոշուին, Ազգ. Վարչութիւնս ալ պատեն առիթը հասած կը համարի սկիզբն ընել քանակցութեան, հետեւապէս կը խնդրէ որ 2եր Վեհափառութիւնը բարեհաճի ծանուցանել թէ ո՛ւր եւ ինչ քանակաւ այդ ժողովը պիտի դուժարի, եւ յարաբերութեանց խնդրէն զատ այս առթիւ եկեղեցական ուրիշ ինչ կարեւոր խնդիրներ պիտի ներկայանան »:

Նախ՝ ազգային հրաժարեալ Վարչութեան կը հարցնեմ թէ Ա.Ե.Ն. կաթուղիկոսն իւր ո՛ր գրովն ըսաւ թէ ես Ընդհանուր ժողով պիտի դուժարեմ: Այսպիսի իմաստով քան մը չկայ անոր նամակներուն մէջ, բայց Նորին Վեհափառութիւնն իւր հեռագրին մէջ ըսած է միայն թէ Երեսփ. ժողովոյ ձեռնհասութեան չպատկանիր այս տեսակ նոր խնդիրներու ձեռնարկել, եւ թէ Եկեղեցական ժողովոյ յատուկ է անոնց արշարինութիւնը:

Ուրեմն կը հարցնեմ, Ազգ. Վարչութիւնը Ընդհ. ժողովոյ կարծիքն ու հաւանութիւնը չառած, ո՛ւրիշ իրաւունք առաւ եւ ո՛ր օրինաց վրայ յենելով Ա.Ե.Ն. կաթուղիկոսին հարցոց թէ՛ Եկեղեցական ժողովն ո՛ւր եւ ինչպէս պիտի դուժարի, եւ թէ ինչ խնդիրներ կան ներկա-

յանայի: Կը հարցնեմ, եւ Նախագահ Սրբազանին պատասխանին կապակեմ որ շարունակեմ խօսքս:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Իրաւունք չունիք բնաւ, երեսփոխան էք: ազգային պաշտօնատարի մը հարցում ուղղելով՝ անկէ անմիջական պատասխան պահանջելու, եւ այդ պատասխանը իբր խօսից պայման դնելու: Գուք շարունակեցէ՛ք 2եր խօսքը, 2եր քննադատութիւնը, եւ երբ ժողովը այդ տեսակ հարցում մ'ընելու հարկ զգայ, այն ատեն խնդիրը կը փոխուի:

ՊԵՎԵԱՆ Թ. ԷՖ.— Ա.Ե.Ն. կաթուղիկոսին կոնդակն ու անոր տեղի տուող պատասխանն Ընդհ. ժողովոյ ներկայացած են, որպէս զի քննադատուին: Ես այդ քննադատութեան իրաւունքս 'ի գործ կը դնեմ եւ հարկ կը գրամ Ազգ. Վարչութեան հարցում մ'ընելու, փոյթ չէ եթէ Նախագահ Սրբազանը չուզէր պատասխանել, ես իմ խօսքս կը շարունակեմ վերստին, բայց կը կրկնեմ թէ իրաւունք ունէի՞ այդ տեսակ հարցում մ'ընելու, վասն զի Ազգ. Վարչութիւնն իւր պատասխանագրին մէջ անիրաւութեամբ վարուեցաւ Ա.Ե.Ն. կաթուղիկոսին դէմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— (Ը-դ-Վ-Է-Է) Կը կրկնեմ, ՊԵՎԵԱՆ ԷՖ. իրաւունք չունիք այդ կերպով խօսելու եւ կազակեմ որ բառերը քաջ կը լսուիմ արտասանէք, որպէս զի ժողովոյ ներքին բարեկարգութիւնը շիտեղու տեղի շարուի:

ՊԵՎԵԱՆ Թ. ԷՖ.— (Ն-դ-Վ-Վ-Է-Է Է-դ Է-դ-Է) Ամենայն ճշդութեամբ գործածեցի բառը, վասն զի Ազգ. Վարչութիւնը իրաւունք չունէր Ա.Ե.Ն. կաթուղիկոսին հեռագրէն թիւր մեկնութիւններ հանելու, եւ քանի որ կը տեսնեմք թէ անոր նամակին ամենէն գլխաւոր եւ էական մասը թիւր ու սխալ մեկնութեանց վրայ հիմնեալ է, ինչպէս մեր Ա.Ե.Ն. Հայրապետը այդ նամակին որ ծայրէ 'ի ծայր լի է հակասութեամբ եւ զոր պատրաստ եմ ապացուցանել, մէն մի խօսքին պատասխանէր: Արդէն Ա.Ե.Ն. կաթուղիկոսն ալ իւր կոնդակին մէջ կը գանդատի այս նամակին նկատմամբ, եւ ահաւասիկ իւր կոնդակին բուն իսկ քանի մը բառերը կարգում:

« Անագան ուրեմն ընկալեալ զնամակն թըւագրեալ 'ի 10 մարտ ամսոյ ստորագրութեամբ 2եր եւ Մեծ. անդամոց Քաղ. ժողովոյ իբրեւ 'ի պատասխանի մերում հեռագրի, ընթերցաք մեծաւ զարմացմամբ, զի հարուածեալ զհնաւանդ եւ զնուիրագործեալ իրաւունս Մայր Աթոսոյ եւ Ազգի, եւ մանուածոյ քանից ճար-



տարութեամբ յեղաշրջեալ յայլ իմն կերպարան զիսկութիւն անցից խնդրոյն Սոյ ջանայիք ցուցանել օգտաւէտս՝ եւ նշան միութեան եւ ամբողջութեան Ազգի » :

Արդարեւ Ա.Ե.Յ. Հայրապետին դատաստանը այդ նա հակին վրայ շատ իրաւացի է եւ ստոր : Իւր հեռագրին բոլոր խօսքերն այլայլուեր, խեռութիւնքեր են եւ այնպէս մանուածոյ խօսքերով նամակ մը գրուեր է Ազգ. Վարչութեան կողմանէ՝ որու նորին Վեհափառութիւնը արժան չէ դատէր պատասխանել : Եւ ինչ իրաւունք ունի Ազգ. Վարչութիւնը հարցնելու Ա.Ե.Յ. կաթողիկոսին թէ, ժողովն ո՛ւր պիտի գումարի : Այս հարցումն սպառնալիք մ'է Ա.Ե.Յ. կաթողիկոսին դէմ, որ Ազգ. Վարչութեան այս խնդրոյն մէջ անկեղծօրէն շարժելու դիտաւորութիւն չունենալը կը յայտնէ : սպառնալիք մը յանուն այն եկեղեցական Բնդհանուր ժողովոյ որուն Ա.Ե.Յ. կաթողիկոսն ակնարկած էր իւր հեռագրին մէջ, եւ զոր Ազգ. Վարչութիւնը նորին վեհափառութեան աչքին ցոյց կուտայ սպառնալիս : Եւ Ազգ. Վարչութիւնն այս հարցումն ընելէ ետեւ թէ եկեղեցական ուրիշ ինչ խնդիրներ պիտի ներկայանան, կը դառնայ քիչ մը վարը կը յարէ թէ յարաբերութեանց խնդրոյն լուծմամբ բոլոր երեւակայեալ վտանգները պիտի ցրուին, խնդիր մը որ բանակցութեամբ կրնայ կարգադրուիլ : Արեւմտ իրաւամբ Ա.Ե.Յ. կաթողիկոսն այս մանուածոյ խօսքերուն յանձն չառնուր մի առ մի պատասխանել, եւ երկու արժանաւոր մարդ, երկու պատգամաւոր կուզէ անոնց հետ անկեղծօրէն խորհրդակցելու եւ բանակցելու համար : Արդ ես կառաջարկեմ որ այդ ուղուած պատգամաւորներն յուղարկուին, եւ եթէ կարելի է իմ հարցմանս պատասխանն ալ արուի :

ԲՕԼՕԼԵԱՆ Ա. Է.Յ.— Ես ալ Մաղըմեան էֆ. ի նման երեսփոխանական պաշտօնի կոչուած եմ վերադառնալ, եւ պարտաւորութիւն մ'ունիմ կատարելու Շնորհակալ եմ ընտրողներէս, որ իրենց համակրութեամբը պատուեցին զիս, շնորհակալ եմ այն ժողովէն, որ ընտրութիւնս վաւերացուց : Այս պարտաւորութիւնս կատարելով կ'անցնիմ օրուան խնդրոյն :

Ես կը զարմանամ որ ժողովոյն այնպիսի խնդիր մը կը ներկայանայ որ արդէն իւր լուծումն առած է, մինչդեռ անլուծ մնացած խնդիրներ բարձիթողի կը մնան : Սոյ կաթողիկոսի ընտրութիւնը կատարուած իրողութիւն մ'է, բայց

միթէ զայն յետ կոչելու նպատակ ունի՞մք, միթէ պիտի ըսեմք թէ մեք ընտրեր եմք, բայց Ա.Ե.Յ. կաթողիկոսը չընդունիր : Այս ամենը անկարելի է, այսպիսի պատկառելի ժողովոյ մ'որոշումը քննադատելու եւ եղծելու համար պէտք է որ քան զինքը գերադոյն ժողով մը լինի : Եւ բաց առի՞ն՝ այն տեսակ խնդիրները կը քննադատին, վիճարանութեան կ'ենթարկին, որք գործադրութեան պիտի դրուին : Արդէն կատարուած գործի մը վրայ խօսիլ, վիճարանիլ, ոչնչարանութեամբ ժամանակ անցնել ըսել է : Եթէ կայ ուշադրութեան արժանի խնդիր մը, այն ալ կ'իլիկիոյ եւ Ազգամարայ կաթողիկոսաց՝ Արարատեան Մայր Աթոռոյ հետ ունենալիք յարաբերութեանց խնդիրն է, զորս պէտք է սահմանել ապագային համար :

Անցեալին վրայ խօսիլ եւ խնդիր յարուցանել կը կրկնեմ անտեղի է, անվերջանալի է : Այնպիսի գործ մը կը կեղեցենք որու նիւթը կծու է :

ԱՂԱԲԵԿԵԱՆ Մ. Է.Յ.— Պատրաստուեր էի Պէկեան էֆ. ի երկարօրէն պատասխանել եւ շատ մը բացատրութիւններ ու պատմական տեղեկութիւններ տալ իրեն, բայց Քօլօլեան էֆ. կատարուած իրողութիւններուն վրայ խօսիլն աւելորդ է, ըսաւ, ես ալ համակարծիք եմ իրեն եւ չեմ ուզեր անցելոյն վերադառնալ, միայն թէ կուզեմ քանի մը զիտողութիւններ ընել : Կը զարմանամ որ Պէկեան էֆ. բերանը շատ լի կը խօսի, չգիտեմ թէ ինչ գերակայութիւն կուտայ Ա.Ե.Յ. Վէորդ կաթողիկոսին, չցիտեմ թէ ինչու այդպէս յարեր է անոր :

Ինչու Տաճկաստանի Հայոց Բնդհ. ժողովը շատ պղտկ կերեւայ ոմանց աչքին, եւ անոր ամեն արարքին վրայ կը ծանրանան : Երբեմն նոյն խի արդի Վէորդ կաթողիկոսին կ'Պօլսոյ Պատրիարք դանուած ժամանակը՝ Պօլսոյ Գերագոյն ժողովն աւելի ազդուութիւն, աւելի գերիշխանութիւն ցոյց տուաւ, քան թէ հիմա Ազգին քուէովն ընտրեալ Երեսփ. ժողովը, մինչդեռ Վէորդ Պատրիարքն Հայրապետական գահուն վրայ է : Այս ըսածներս պատմական կերպով կրնամ հաստատել : Երբ հոգեւոյս Մատթէոս Արքայանը կաթողիկոս կընտրուի, Գերագոյն ժողովը կը գումարի (բրօթօքօլ) մը կը շինէ, առաջարկութիւններ կընէ, եւ Վէորդ Պատրիարքը՝ որ այժմ կաթողիկոս, կը գրէ որ կաթողիկոսը նախ ու այսու այն առաջարկութիւններն գործադրէ :

Կը յիշեմ, այդ առաջարկութեանց զլրաւոր-

ներէն աւաղինն, այն էր որ երուսաղիմայ, կիլիկիոյ ու Ազգամարայ Պատրիարքներն հնազանդ լինին կ'Պօլսոյ Ազգ. Վարչութեան, եւ այն ատեն Պօլիս ալ էջմիածնի կաթողիկոսէն կատարուած ունենայ : Երկրորդն այն էր որ մի ժողով կազմուի Հայաստանեայց եկեղեցւոյ բարեկարգութեան համար, ինչ որ եկամուտ ու օտար մեր եկեղեցւոյ մէջ սպրդեր մտեր է, դուրս ելնէ, եւ ինչ որ մեր եկեղեցւոյ յատուկ է եւ հարազատ ներս մտնէ նորէն : Արիշ կէտեր ալ կային տակաւին :

Իսկ եթէ ՚ի վերջէ Մատթէոս կաթողիկոսն այս առաջարկութիւններն չգործադրէր էջմիածնի Աթոռը իր թափուր պիտի նկատուէր : Այսպէս գրած էր այն ատեն կ'Պօլսոյ Պատրիարքը, եւ այս գրողը մեր արդի Ա.Ե.Յ. Վէորդ կաթողիկոսն էր :

Սուուզիւ շատ կը զարմանամ որ Վէորդ կաթողիկոսը երբ Պատրիարք էր կ'Պօլսոյ, կը համարձակի իւր Գերագոյն ժողովովը՝ որ օրինաւորութեամբ ընտրեալ չէր Ազգէն, այսպէս սպառնալի մի բան գրել Արարատեան Մայր Աթոռոյ, եւ հիմա որ ինքն է կաթողիկոս, Տաճկաստանի Հայոց Երեսփ. ժողովոյն՝ որ զինքը այդ բարձրագոյնին հասուցեր է, եւ անկէ ծնած Քաղ. ժողովոյն այս տեսակ գրեր կը զրկէ եւ զանոնք նախատել կը փորձէ : Ես իբրեւ Բնդհ. ժողովոյ անդամ, կարհամարհեմ այդ . . .

ԱՏԵՆԱՊԵՏ Է.Յ.— (Ընդհանր) կը խնդրեմ, ատենարան էֆ. ուշ գրէք բառերուն :

ԱՂԱԲԵԿԵԱՆ Մ. Է.Յ.— (Շարունակելով) Ինչպէս Պէկեան էֆ. այս խնդրոյն վրայ բացուած վիճարանութեան սահմանն ընդարձակելով Ազգ. Վարչութեան նամակը քննադատելու ելաւ, ես ալ այդ սահմանին մէջ Ա.Ե.Յ. կաթողիկոսին անցեալ ու ներկայ ընթացքը, արարքը քննադատեցի մեղմիւ, բայց պատմաբանօրէն : Ինչ եւ է աշխատիմք այդ վիճակը զէպ ՚ի լաւ դարձընելու, երկու պատգամաւոր զրկեմք եւ գիտնամք թէ այսօր աշխարհիս երեսը իբր քրիստոնեայ ժողովուրդ ինչ եւք մեք, եւ մեր վիճակին դարման մը բերեմք :

Այս է իմ առաջարկութիւնս :

Տ. ՂԵՆՈՆԻ ՎՐԴ.— Մեծ ցաւ կըզգամ որ պըղտի խնդիր մը քանի մը նիստերէ ՚ի վեր այսքան մեծ վիճարանութեանց տեղի կուտայ եւ քանի մը երեսփոխանք զայն իբր կարեւոր եւ օրուան խնդիր նկատելով իրենց մասն են փաթթեր՝ ժողովոյ ժամերն ընդունան սպառել կուտան եւ չեն թողուր որ ուրիշ կարեւոր գործերով զբաղին :

Ինչ է այս խտիրը, երեսփոխան էֆէնտիք, կամ զմեզ մերժեցէք, կամ այդ խտիրութեան պատուարը՝ զոր մեր եկեղեցւոյ մէջ կանգնել կը ճգնին, վերջեցէք : Ես չեմ կարծեր որ զուք խտիրութեան պաշտպան լինիք, եւ ասոր ապացոյց, ահաւասիկ ընդունելու էք Ձեր մէջ զիս եւ շատ մ'արժանապատիւ հայրեր, որ Սոյ ու Ազգամարայ աթոռոց ձեռնադրեալները, բայց Հայաստանեայց եկեղեցւոյ վարդապետներն եմք : Վերջ տուէք ուրեմն այս անկարեւոր վիճարանութեան :

Հայաստանեայց եկեղեցւոյ գլուխը Քրիստոս է : Վէորդը կամ կիրակոսը գլուխ չեմ ճանչնար : Սոյ եւ Ազգամարայ աթոռներն Ազգինն են, եթէ մին կամ միւսը թափուր մնայ, եւ արժանաւոր ընտրելիներ պակսին, միթէ անթողլի մե՞ղք կը լինի որ էջմիածնի արժանաւոր եկեղեցականաց մին այդ աթոռներէն միոյն վերանայ : Խտիրութեան ջատագովներ ինչ կըսեն միթէ օտարազգի եկեղեցական մը անդ կաթողիկոս պէտք է զնել, կը խնդրեմ Գիւանէն որ այս հարցմանս պատասխանելով ապահովէ զիս :

ԱՏԵՆԱՊԵՏ Է.Յ.— Ինչպէս պահ մ'առաջ ալ արդէն զիտել տուի, ատենաքանները Գիւանին կամ ասոր անոր հարցումներ ուղղելով պատասխան պահանջելու իրաւունք չ'ունին :

Շարունակեցէք Ձեր խօսքը : Գիւանը պարտաւոր չ'է Ձեր հարցմանը պատասխան տալու :

Տ. ՂԵՆՈՆԻ ՎՐԴ.— Ես խորհելով կը խօսիմ, եւ օրինաւորութեան սահմանէն չեմ շեղիր, իմ հարցմանս պատասխան չեն կարող տալ խտիրութեան ջատագովները :

Սոյ կաթողիկոսին ընտրութիւնը կատարուած գործ մ'է, ալ այսուհետեւ ետ չդառնար, վասն զի չեմ կարծեր որ Բնդհ. ժողովն իւր որոշումն յետ կոչէ : Մեզ գործ մը միայն կը մընայ, այն է կաթողիկոսական աթոռոց յարաբերութիւնները ու իրաւասութիւնները սահմանել : Արեւմտ Յանձնաժողով մը կազմնէ փութով որ այդ յարաբերութեանց ծրարիրը պատրաստէ եւ պատկառելի ժողովոյդ վաւերացմանը ներկայացնէ :

ԲՕԼՕԼԵԱՆ Ա. Է.Յ.— Երբ ատենարանները խօսելու ատեն ծանր բառեր կը գործածեն եւ Գիւանը լուրջին կը դահէ, եւ կուզեմ պատասխանել :

Այնպէս խօսքեր կը լսուին որպէս թէ Երեսփ. ժողովն ինչ որ ուզէ կրնայ ընել իւր բարձր հեղինակութեամբը : Իրաւ է որ այս ժողովն



զազգը կը ներկայացընէ, բայց Վ.ԿՏ. Կաթուղիկոսն ալ նուստատցընել չըւար: Աթուռին բարձրութիւնն ուրիշ եւ Երեւոյ. Ժողովներ արիւն է: Քաղաքական նկատումները գէթ կը պահանջեն որ Կաթուղիկոսը բարձրագոյն դասեր, եւ չէ թէ փոքրկայնեմք: Կառաջարկեմ որ ծանր խօսքեր տեղի չունենան, կառաջարկեմ որ այս խնդիրը գոցուի եւ յարարութեանց խնդիրը բանակցութեան գրուի:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Գիււանը իւր պարտաւորութիւնը դիտէ կատարել եւ ամէն անգամ որ անպատշաճ խօսք մը, բառ մը կը սպրդի տաննարանի մը բերնէ, Գիււանն ազգարարութեամբ կը փութայ ուղղել: Բայց երեւան եկած որ եւ է կարծիքներու եթէ պատասխան չտար, այս լուծիւնը՝ Գիււանին կողմանէ հաւանուներ թիւն չենթադրէր, եւ ասկէ դատ իրեն պաշտօնը չէ ամեն տեսակ զիտողութեանց խնդիրն պատասխանել: Իսկ մեր Ազգը՝ ինչպէս կըսէք, աստեալան է՞ք. որ եւ է խնդրոյ մը վրայ քաղաքական նկատումներ չունի այլ կրօնական ազգ մ'է որ իւր ներքին գործոց կըբազին:

ՊԵՏԵԱՆ Թ. ԷՖ.— Ձեռ հասկնար թէ ինչո՞ւ խնդիրը կը շփոթեն: Եղածն իբր կատարուած իրողութիւն համարուելուն վրայ չէ խնդիրը: Զայդ որոշել մեր ձեռնհասութեան վեր է, կայ ուրիշ մեծ ժողով մը Հայաստանեայց եկեղեցւոյ Ընդհ. Ժողովն որու յատուկ է միայն այս տեսակ խնդիրներ յուզել, որոշել: Այո՛, ես ալ համամիտ եմ որ եղածն եղած համարուի, եթէ կարելի է: Բայց խնդիրն այդ կէտին վերայ չէ հիմա: Վ.ԿՏ. Կաթուղիկոսին կոնդակը կեցած է, որով երկու պատգամաւոր կը խնդրէ անոնց հետ բանակցելու համար, զանոնք պիտի զրկեմք: Թէ ոչ, Ահա այս է խնդիրը:

Իսկ Ազգայնական է՞ք. ի այն խօսքին՝ թէ ես լի չրթունքով կը խօսիմ, կամ ես իմ վրաս համարում ունիմ, չեմ ուզեր պատասխանել, այլ իւր զիտողութեանց կանցնիմ:

Ժամանակաւ Գերագոյն ժողովը Մատթէոս Կաթուղիկոսի գրեթէ եզեր որ երբ որոշուած բարեկարգութիւնները չգործադրէ, Էջմիածնի Աթուռ թափուր պիտի հրատարակէ, բայց այս չէ մեր խնդիրը, մանաւանդ որ այդ տեսակ որոշում մը օրինաւոր չէ. այդ Գերագոյն ժողովը Տաճկաստանի Հայոց կաթը չ'ներկայացներ, մինչդեռ Ազգին արդի ժողովն երեսփոխանական է, եւ աւելի օրինաւոր: Բայց խնդիրն ո'չ այս է եւ ո'չ այն, Ընդհ. Ժողովը Սոյ կաթուղիկոս մ'ընարել տուաւ եւ այդ ընտրութիւնը

վաւերացուց, Վ.ԿՏ. Կաթուղիկոսը այն ընտրութիւնը Հայաստանեայց եկեղեցւոյ փողովն կանոնաց համաձայն չգտնէր:

Արդ Ընդհ. Ժողովոյ երկու բան կը մնայ ընել. կա՛մ պէտք է Վ.ԿՏ. Կաթուղիկոսին ըսել, մեր արարքը, Վ.ԿՏ. Տէր, զոր դուք օրինաց անհամաձայն կը դատէք, օրինաւոր կը թուի մեզ: Բայց եթէ դուք կը պնդէք, դուժարեցէ՛ք Եկեղեցեացեալ Ընդհ. Ժողովն որ կրճիմը լուծէ եւ իւր վճիռը տայ. կա՛մ պէտք է Վ.ԿՏ. Կաթուղիկոսին հնազանդել: Կողաչեմ լաւ 'ի միտ առնէք այս կէտը: Վերստին կը կրկնեմ, կա՛մ Ընդհ. Ժողովը Վ.ԿՏ. Կաթուղիկոսի կոնդակին 'ի պատասխան պիտի պնդէ թէ իւր ընթացքը օրինաւոր էր, կա՛մ ապօրինաւորութիւնը պիտի ճանչնայ: Եթէ Ընդհ. Ժողովն իւր քրածն օրինաւոր կը դատէ, եւ արամադիր չէ իւր որոշումը եւ առնելու, այս ժողովին մէջ մաս մը կայ, որ կ'ըսէ մեր մաքէն չէր ձեռնարկ թէ մեր արարքը Հայաստանեայց եկեղեցւոյ անհամաձայն լինի, մաս մ'ալ կայ որ Ընդհ. Ժողովոյ այս որոշումը տուած օրն ընդդիմութիւն յարոյց, թէ եւ աստեղծութեանց մէջ այն ընդդիմադիր կողմին 8 թիւ զեղջուելով՝ չորս երեսփոխանք միայն հակառակ կարծիք յայտնեցին գրուած է:

Քանի մը նստարաններու վրայէ— Տպագրական սխալ մ'է այդ, թող Ձեր թիւը 8 լինի:

ՊԵՏԵԱՆ Թ. ԷՖ.— Մանաւանդ որ Եզրակոպոսներ ալ կային որ պարզմտօրէն նոյն օրը ապահովութիւններ տուին եւ վտանգ չկայ ըսին:

Ձայներ— Սոյոց է դարձեալ վտանգ չկայ:

ՊԵՏԵԱՆ Թ. ԷՖ.— Շատ աղէկ, եթէ ժողովը կը պնդէ թէ իւր արարքը օրինաւոր է, եւ Հայաստանեայց եկեղեցւոյ կանոնաց համաձայն, պէտք է քաջութեամբ Վ.ԿՏ. Կաթուղիկոսին ըսել որ սխալած չենք, եւ գուժարէ Եկեղեցեացեալ Ընդհ. Ժողովը. ապա թէ ոչ խոստովանելու է թէ մեք սխալած եմք: Այս վերջինը Ըսեմք եւ խնդիրը կարգադրուած կը լինի:

Քանի մը երեսփոխանաց կողմէ— Այդ ձեր կարծիքն է:

ՊԵՏԵԱՆ Թ. ԷՖ.— Այո՛, իմ կարծիքս այս է, պէտք է Վ.ԿՏ. Կաթուղիկոսն ապահովել եւ ը-

սել թէ, Կիլիկիոյ կաթուղիկոսութեան խընդրոյն մէջ ինչ որ Ընդհ. Ժողովն քրաւ, կանխակալ զիտումով մը չէր, այլ պարագաներն հարկադրեցին զինքը այնպէս շարժելու. եւ չկարծեց թէ օրինաց կը հակառակի իւր ընթացքը, քանի որ վտանգ կայ կըսէք, խորհիմք ապագայն այդ վտանգին ներքեւ չգնելու միջոցներուն վրայ: Այսպէս պէտք է պատասխանել Վ.ԿՏ. Կաթուղիկոսին, բայց ես այս բանակցութիւնը գրով կատարելն աղէկ չեմ գտներ եւ կառաջարկեմ որ երկու պատգամաւորներ զըրկուին, բայց ոչ լիազօր իշխանութեամբ, վտանգի երկու անձինք չեն կարող ամբողջ Ազգ մը ներկայացնել եւ անոր բոլոր կամաց թարգման հանդիսանալ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Ուրեմն, Պէկեան է՞ք. Ձեր առաջարկութիւնն է Վ.ԿՏ. Կաթուղիկոսին ըսել թէ կատարուած եղելութիւններն Էջմիածնի Աթուռին դէմ հակառակելու խորհրդով եղած չեն, այլ անկեղծօրէն, եւ այս բանակցութիւնը կուզէք որ պատգամաւորներու միջոցաւ կատարուի: Ուրիշներ ալ այդ պատգամաւորութիւնը թէ եւ առաջարկեցին, բայց Ձեր առաջարկութիւնը սա տարբերութիւնն ունի որ պատգամաւորաց լիազօր իշխանութիւն տալ չուզէր:

ՊԵՏԵԱՆ Թ. ԷՖ.— Այո՛:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Թէ եւ պահ մ'այնպէս երեւցաւ որ իրարու ներհակ կարծիքներ խնդիրը պիտի կնճառտեն, բայց սկզբան վրայ քիչ շատ տարբերութեամբ համաձայնութիւն մը կ'սկսի յառաջ դալ, քանի մը կէտեր վիճաբանութեամբ անելի լուսաւորուելով, Ուստի կազաչեմ երեսփոխան է՞ք. ներուն որ խնդրոյն սահմանէն չը չեղին եւ շարունակեն իրենց խօսքը:

ԱՂԱԲԷՎԵԱՆ Մ. ԷՖ.— Վ.ԿՏ. Կաթուղիկոսին կոնդակէն այնպէս կը հասկցուի թէ Սոյ կաթուղիկոսին՝ զաւառին կողմանէ ընտրութիւնը՝ եւ Ընդհ. Ժողովն վաւերացուած Մայր Աթոռոյ իրօւանց դէմ բանարարում մը, Հայաստանեայց եկեղեցւոյ կանոնաց հակառակ եղելութիւն մ'է, ինչպէս Պէկեան է՞ք. ցոյց տուաւ. Ժողովը միթէ ա'յնպէս պիտի ըմբռնէ խնդիրը, բայց Վ.ԿՏ. Կաթուղիկոսը ապացոյց մը, պատմական փաստ մը չբերէր իւր խօսքը հաստատելու համար, եթէ ապացոյցներ մէջ տեղ դնէր, այնատեն մեք որ Էջմիածնի թեմի ժողովուրդն եմք, զմեզ կերպով իւրք մուրտուած պիտի համարելուք եւ Սոյ եկեղեցին ալ հերետիկոս կամ հերձուածող, կա՞ն արդեօք Ատենապետ է՞ք. Վ.ԿՏ.

Կաթուղիկոսի կոնդակին մէջ այս ամենը ապացուցանող անվիճելի փաստեր:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Գիււանը պատասխան չունի, հարցման ձեւով մի խօսք ուղղէք անոր: ԱՂԱԲԷՎԵԱՆ Մ. ԷՖ.— Ընդհ. Ժողովն եթէ Հայաստանեայց եկեղեցւոյ կանոնաց հակառակ շարժած է, պէտք է հաստատուի եւ ի՞նչպէս այս չը հաստատուած Պէկեան է՞ք. կը պահանջէ որ Ընդհ. Ժողովը տակաւին Կաթուղիկոսի կոնդակին ապաւորութեանը ներքեւ ելնէ ինքզինք մուրտեալ հրատարակէ. եւ Վ.ԿՏ. Կաթուղիկոսին այս իմաստ յայտարարութիւն մ'ընէ: Ըսէ՞ք կարելի է այս տեսակ անխորհուրդ ընթացք մը բռնել:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Իրաւ է որ Պէկեան է՞ք. 'ի սկզբան այդպէս ըսաւ, բայց 'ի վերջոյ խոստովանեցաւ թէ Ընդհ. Ժողովը Կիլիկիոյ կաթուղիկոսի խնդրոյն մէջ Հայաստանեայց եկեղեցւոյ կանոնաց դէմ հակառակելու զիտմամբ շարժած չէ: ԱՂԱԲԷՎԵԱՆ Մ. ԷՖ.— Գիււանը պէտք է ապահովցնէ զմեզ թէ Սոյ կաթուղիկոսին այս օրինակ ընտրութիւնն ու վաւերացումը երբէք կարգի կանոնի հակառակ չէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Ի՞նչ հարկ որ Գիււանն այդպիսի ապահովութիւններ տայ եւ յայտարարութիւններ ընէ, Կիլիկիոյ կաթուղիկոսական ընտրութեան նկատմամբ Ընդհ. Ժողովոյ բռնած ընթացքին դէմ Վ.ԿՏ. Կաթուղիկոսը կոնդակ մը գրկած է, ի՞նչ պատասխան տալ պէտք է այն կոնդակին, դուք ձեր կարծիքն յայտնեցէ՛ք, ձեր առաջարկութիւնը ներկայացուցէ՛ք, Գիււանէն ինչո՞ւ ապահովութիւններ կուզէք:

ԱՂԱԲԷՎԵԱՆ Մ. ԷՖ.— Պէկեան է՞ք. ըսել ուզեց թէ երեսփոխաններէն շատեր իբր անվաւեր կը նկատեն կատարուած գործողութիւնները . . .

Պէկեան է՞ք. աստեղծարանն ընդմիջելով պատասխանել կուզէ, սակայն Ատենապետ է՞ք. զիտակ տալով որ իւր խօսքերն եթէ թիւր մեկնում թիւններ ալ գտնեն, աստեղծարարութեանց մէջ արդէն արձանագրեալ են եւ հարկ չկայ նորէն միեւնոյն բաները կրկնելու, հրաւիրեց աստեղծարարը որ շարունակէ իւր խօսքը ու առաջարկութիւնն ընէ:

ԱՂԱԲԷՎԵԱՆ Մ. ԷՖ.— Ես հարցում մ'ուղղեցի, որու պատասխանը անհրաժեշտ էր: Գիււանը պարտաւոր էր պատասխանելու, երբ Գիււանն այդ պարտաւորութիւնը չկատարէր, ի՞նչ խօսիմ ուրեմն, կը լռեմ:



ՔՕԼՕԼԵԱՆ Ա. ԷՖ.— Խնդրոյն վրայ բաւական խօսուելէ ետեւ՝ հասկցուեցաւ թէ սոյն կէտին վրայ կարծիքներն իրարու համաձայն են, բայց Պէկեան էֆ. խնդիր մ'ալ յարոյց, ժողովոյն մէջ զօրաւոր մաս մը կայ բաւ, որ կատարուած իրողութիւնները չընդունիր հիմա...

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— (Ընդդէմ) Պէկեան էֆ. շատ բան խօսեցաւ, բայց իւր խօսքը եզրակացուց, շիմա մէն մի խօսքին ելնել պատասխանել, նորէն խնդիրը ճապարկել եւ ատելի բանակուել մը դուռ բանալ է: Գուք ձեր կարծիքն յայտնեցէք, ձեր առաջարկութիւնն ըրէք, եթէ ունիք:

ՔՕԼՕԼԵԱՆ Ա. ԷՖ.— Պէկեան էֆ. ի խօսքին եզրակացութեան վրայ ըսելիք մը չունիմ, վաստի որ անոր թէեւ ոչ բողոքովն, բայց մասամբ մը համամիտ էի, միայն թէ բանախօսութեան ընթացքին մէջ այնպիսի խօսքեր ալ ըրաւ որոնք կատարուած իրողութիւն մը քուէի դնելու իմաստն ունին:

ՊԷԿԵԱՆ Թ. ԷՖ.— (Ընդդէմ) Ո՛չ, ո՛չ:

ՔՕԼՕԼԵԱՆ Ա. ԷՖ.— (Երբեք) Տարի մը առաջ տրուած որոշում մը՝ որ այսօր դործ դարձեր է, ելնել ջնջել չըլլար:

ԻԹԻՒՆՃԵԱՆ Կ. ԷՖ.— Վեհ. կաթողիկոսին առաջարկութիւնը ընդունելու կամ չընդունելու, այսինքն որոշելու համար թէ երկու պատգամաւոր զրկել պէ՞տք է թէ ոչ, կէտ մը կայ զոր պէտք չէ մոռնալ: Եթէ սխալ չեմք հասկըցած Վեհ. կաթողիկոսի քննադատութեան բողոքանայ նիւթ եղող կէտը էջմիածնայ եպիսկոպոսի մը Սոյ կաթողիկոսական աթոռին վերայ բարձրանալն է, ու չէ թէ այն որ Սոյ կաթողիկոս մը ընտրուեր Ընդհանուր ժողովէն վաւերացուեր է, Բայց էջմիածնի եպիսկոպոսի մը Սոյ կաթողիկոս ընտրուելը նոր եղելութիւն մը չէ, պատմութեանց մէջ օրինակները կան, եւ անխօսի էջմիածնայ եպիսկոպոսներ Սոյ կաթողիկոս եւ փոխադարձաբար Սոյ եպիսկոպոսներ էջմիածնայ կաթողիկոս ընտրուեր են, աւանդական հեղինակութիւնն մը՝ որու ներքին է հեռուիլ քանի որ Եկեղեցին առաջուց մերժած ու ապօրինաւոր հրատարակած չէ:

Բայց թողունք այս ամենը մէկդի, ուրիշ զարմանալի պարագայ մը կայ:

1866 ին Պօլսոյ Եկեղեցական Համագումար ժողովոյն միջոցաւ Սոյ կաթողիկոսին ընտրութեան համար պատրաստուած ընտրելաց ցան-

կին մէջ շատ մը էջմիածնայ եպիսկոպոսներու անուաններ կային նշանակուած. ընտրութեան խնդիրն ալ որոշուեր եւ դործագրուելու վիճակին հասեր էր, երբ այլ եւ այլ պարագաներ եկան արգելք եղան Բայց այն ատեն Վեհ. կաթողիկոսն որ մայրաքաղաքս կը գտնուէր եւ այս ամենը գիտէր, երբէք որ եւ է գիտողութիւն մը չըրաւ այս կէտին վրայ, շիմա որ Համագումար ժողովոյ որոշման համաձայն խնդիրը դործագրութիւն կը գտնէ, Կիլիկիոյ կաթողիկոսին ընտրութիւնն ու վաւերացումը կը կատարուի, Վեհ. կաթողիկոսը էջմիածնէն բողոք կը բաժնայ որպէս թէ Եկեղեցւոյ կանոնաց հակառակ դործագրութիւն մը կատարուած լինի: Կեզրակացնել խօսքս եւ կրսեմ թէ Ընդհ. ժողովը Վեհ. կաթողիկոսի հետ ի՞նչ եղանակաւ ալ բանակցութեան մասնէ, պատգամաւորի միջոցաւ կամ զրուիւթեամբ, պէտք է որ այն կարեւոր կէտը՝ զոր յիշեցուցի, ժողովը նկատողութեան առնու:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.— Խօսելու կարգը իմա է, չեմ կարծեր որ անցեալ նիստին բազմին հանդիպիմ եւ խօսքերս ընդմիջուին:

Կրսեմ թէ երբ Սուլթան Մէհմէտ Կոստանդնուպօլսոյ տիրելու վրայ էր, Յոյներն աստուածարանական խնդիրներ յարուցեր էին եւ անոնց վրայ կը վիճարանէին ջերմութեամբ Այասօֆիայի մէջ:

Մեր Ազգին դուռն ալ բազմադիմի դժբաղդութիւններ ու վշտեր եկեր ափ առեր են, կարեւոր դործեր կան որ անօրէնութիւն կուզեն, եւ մենք մեր ոյժը կսպառեմք անկարեւոր խնդիրներու վրայ վիճարանելով: Ապագայ սերունդը մեր վրայ չպիտի ծիծաղի, այլ պիտի ողբայ, սլ պիտի դատապարտէ դմեղ որ մեր Ազգին վիճակը չեմք ճանչեր, ու ինչ որ կարեւոր է, ու կենսական մէկդի նշտեր եմք: Այս դատապարտութիւնէն վախնա՞մք, Երեւի. ժողովոյ ասանագրութիւններն առաջուան պէս Պատրիարքարանի մէջ՝ փոշիներու ներքեւ՝ ի միման չին պահուիր, այլ տպագրութեամբ լոյս կը դանեն, եւ մեր ճակտին դատապարտութեան կ'իջը կը լինին:

Կը յիշեմ որ 1860ին՝ Սահմանագրութեան հաստատութեան ժամանակ՝ ազգային ընկերութիւններ կը կազմուէին այլ եւ այլ նպատակներով: Այս նպատակներուն համեմուտ մտօք կուզէին իրենց կանոնադրերուն ճակատը քանի մը հիմնական տրամագրութիւններ դնել որք անփոփո-

խելի լինին: Չէին մտածեր թէ իրենք քանի մը հողի՝ սխալական մարդեր՝ ով են որ անցեղի տրամագրութիւններ հնարեն եւ ամեն դիպաց զիմագրելով անոնց վրայ քալեն անվրդով, չէին մտածեր դայս եւ միայն սկզբանց վրայ վիճելով իրենց շինած ընկերութիւններն ապագային կը ցրուէին: Եկեղեցւոյ կանոններն ու վճիռներն իսկ, զորս եկեղեցին դրեր է, ի վերջոյ երբ հարկը պահանջեր է, փոփոխուեր են Եկեղեցւոյ նոր ժողովներուն միջոցաւ:

Ձանք մը կայ մեր մէջ հիմնական կարգագրութիւն մ'ընելու, որ անցեղի լինի: ապագային իշխելու խորհուրդներ կան եւ կաթողիկոսական աթոռներն ասոնց առարկայ եղած են. ո՞վ կրնայ պնդել թէ այս հեռառես նկատումներն ու հաշիւները ճշգրիտ են եւ անվերբիպելի, եւ թէ՛ նոյն իսկ այսօրուան փրկաւէտ համարուած միջոցները, վաղը ի՞նչ պիտի համարուին: Քիչ մ'ալ մէկդի թողու՞ք աթոռներու համար ապագային անստոյգ հաշիւները, ներկային վրայ խորհի՞ք ժամանակին պիտոյից հետ կշռելով մեր Ազգին վիճակը եւ պիտոյքները: Արդարեւ ցաւելու ու լալու արժանի վիճակի մը հասեր եմք այսօր, օրինակ մը տամ ձեզի՝ նոյն իսկ Վեհ. կաթողիկոսի կոնդակին զիմելով:

Վեհ. կաթողիկոսը Ազգին ապագային համար վտանգ Է՞ք — Է՞ք կերելի կրսէ իւր հնչողէն Է՞ք, բայց ասկէ անդին չանցնիր, տեղէն չը շարժիր այդ վտանգը վանելու համար, մինչդեռ մեր նախնի Հայրապետներն՝ ինչպէս թագաւորներն ալ աղքատներու խրճիթները պըտըտեր են, անոնց հացէն կերեր են, մինչեւ իսկ . . . . . եւ այսպէս ամենայն անձնուրացութեամբ Ազգը խնամեր եւ պահպաներ են Այո՛, աղքատներուն, թշուառներուն քովն ալ երթալ պէտք է զանոնք պաշտպանելու համար:

Եթէ իրօք վտանգ մը Ազգին գլխին կսպառնայ, ո՞վ Վեհ. կաթողիկոսը կաշկանդեր է այն տեղ, ելնէր դալու էր եւ այսքան խօսք տեղի չէր ունենար: Իսկ եթէ վտանգ մը չկայ ու այնպէս կը ձեւացնէ, եւ մեր ժամանակը ի նանիը վտանել կուտայ, մե՞ղք: Բայց այս վտանգը միթէ նո՞ր զգալի եղաւ Վեհ. կաթողիկոսին, 1866 ին Եկեղեցական Համագումար ժողովոյ պատրաստած կաթողիկոսական ընտրելաց ցանկին մէջ էջմիածնայ եպիսկոպոսներ նշանակուած կային եւ ընտրութիւնն ալ մինչեւ իսկ Ընդհ. ժողովը պիտի կա-

տարէր: Այն ատեն բոլոր Ազգն այս որոշումները զիտէր, եւ օրերով խնդիրներ յուղուած էր, միթէ միայն Պրուսայո՞ւ Առաջնորդը չէր զիտէր այս պարագաները, Պրուսայու Առաջնորդն՝ որ էջմիածնի կաթողիկոս ընտրուելով ի Պօլիս եկած էր այն ատեն: Զարմանալի՛ բան: Այս խնդրոյն խորը քաղաքականութիւն կայ . . .

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— (Ընդդէմ) Կը խնդրեմ որ դործաժամ բաւերնիդ կշռէք:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.— (Երբեք) Այս խնդիրը խտրութեան խնդիր է, միթէ էջմիածնայ եպիսկոպոսներ ուրիշ, եւ Սոյ եւ Ազգամարայ եպիսկոպոսներն ուրիշ են: Մեր Եկեղեցւոյ օտար էին առաջ այս տեսակ խտրութիւններ, որք Վեհ. Գէորգ կաթողիկոսի մէկ կոնդակէն ըսկըսան, որով կը գրէր որ էջմիածնայ վիճակի թէմերուն մէջ Սոյ եպիսկոպոսները պաշտօն չ'վարեն, Եթէ մեք ալ մեր կաթողիկոսն ընտրուց Պապին նման անսխալ կարծէինք, թեւեւ այդ խտրութեան պատուարը կանգնէինք եւ ի՞նչ անտանելի վիճակ մը պիտի ունենայինք այն ատեն:

Այս կոնդակն էր որ ծածկուեցաւ, դ՛ուրս հանեցէք զայն, Արքազան Հայր, որ խնդիրը միանգամ ընդ միշտ վերջ գտնէ, ի՞նչ, այս տեսակ խտրութիւններ դնել Ազգը պատակակց կտոր կտոր բաժնել ըսել է, մե՞ղք Հայոց Ազգին, բոլոր վտանգը այդ խտրութեան մէջն է, եւ ոչ այլուր: Եթէ Սոյ կաթողիկոսին ընտրութիւնը չ'վաւերացուցած, ելնէինք Վեհ. կաթողիկոսին կամքը հարցնէինք, իւր պատասխանը բացասական էր, ուստի չէինք կրնար հարցնել, ու չ'հարցուցինք: Կը յիշեմ, երեսփոխանին մէկը՝ որ հոս չէ այս պահուս, եւ անունը չեմ ուզեր տալ, կրսէր այն ատեն, Վեհ. կաթողիկոսին հարցնել չըլլար, վասն զի կամ հնազանդութիւն կամ ոչընթիւն պիտի պահանջէ: Իրաւ է:

Բայց կը տեսնեմ որ Վեհ. կաթողիկոսն իւր խոստումներն ալ մոռցեր է, զորս ըրաւ հանդիսապէս երբ ի Պօլիս էր: Մեք վեց ազգային լրագրատեսներ Բերայի Ս. Երրորդութեան Եկեղեցւոյ մէջ Վեհ. կաթողիկոսին ներկայացանք, ես ինքս ատենաբանութիւն մը կարդացի, Ազգին պիտոյքներն, իդձերն յայտնեցի, եւ նորին վեհափառութեան այս իմաստ ակնարկութիւն մ'ալ ըրի թէ Ազգը չպիտի լսէ իրեն, եթէ ինքն ալ սպասուած բարեկարգութիւնները չդործադրէ: Ի՞նչ կսպասէր Ազգը այն ատեն, Հայրապետական իշխանութեան



որ գերի էր գարձեր, նախկին անկախութիւնը :  
 Նորին Վեհափառութիւնը հրատարակաւ խոս-  
 տացաւ, Աստուած օգնէ ինձ : եւ ես պարտա-  
 կան եմ ըստ, կատարել ինչ որ Ազգը կապատէ  
 ինչ : եւ գնաց այն սոսկալի երդմամբ ինքն ալ  
 կատուեցաւ չղթայակապ, մինչդեռ մենք կու-  
 ղէինք այդ չղթայներն խորտակել, հիմա Վեհ.  
 կաթուղիկոսն բարձու թեան առջեւ ըրած խոս-  
 տումն մտնալով կեցնէ եւ ես երբ ուխտեցի  
 կրսէ : Անցեալ նիստին կ'ըսէի, շատ մի՛ յուզեք  
 այս խնդիրը, որ չստիպուիմ Վեհ. կաթուղիկո-  
 սի ընթացքը բացառել, չէի ուզեր իրաւ, բայց  
 այսօր ստիպեցին զիս ըսել ինչ որ ըսեր ու տե-  
 սեր եմ : Այս վիճակը անհանդուրժելի է, միթէ  
 մեք չզիտե՞մք մեր կաթուղիկոսը յարգել, բայց  
 նա ալ պէտք էր իւր պարտաւորութիւնը կա-  
 տարէր որ մենք ալ իրեն պարտաւորէինք հը-  
 նազանդի :

Այս պահուս Պէկեան էֆ. ատենաբանն ընդ-  
 միջեւով պատասխանել կը փորձէ, բայց ատե-  
 նաբանն իւր խօսքը կը շարունակէ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.— Մեր Ազգը եղբ կաթու-  
 թուղիկոս մ'ունեցեր է, որուն անուան սատե-  
 բը զլիսիվայր դարձուցեր է : Պատմութիւն պէտք  
 է կարգալ որ այս բաները . . . :

Ատենապետ էֆ. կ'ընդմիջէ ատենաբանն եւ  
 կազդարարէ իւր բառերուն ուշ դնել : Ազա-  
 բէկեան էֆ. այս ընդհատման համար Գիււանին  
 դէմ բողոք կը բռնայ, իսկ Պէկեան էֆ. խօ-  
 սիլ կուզէ, բայց Փափազեան էֆ. իւր խօսից  
 թեղը ձեռք կառնու վերստին եւ կսկսի :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.— Եկէք անգամ մ'ալ մեր  
 Ռուսիաբնակ Հայոց հարցնենք թէ Հայրապե-  
 տական Աթոռն ինչ վիճակի մէջ է, տեսնեմք  
 ինչ կըսեն : Բայց մեք ապուշ լինելու էիմք որ  
 ամենայնի անգէտ մնալով Վեհ. կաթուղիկոսին  
 կարծիքը խնդրէինք Սոյ կաթուղիկոսի ընտ-  
 բութեան վաւերացման համար : Անտարակոյս  
 մեր որոշման չպիտի հաւանէր, եւ մենք ոչ այն  
 ատեն արդեօք զքեզ չենք ճանչնար պիտի ը-  
 սէինք : Այս տեսակ դէպքերու տեղի չ'սուինք  
 եւ գործը կարգադրեցինք, իսկ հիմա որ յարա-  
 բերութեանց խնդրոյն կարգադրութեան ժամն  
 հասաւ, հրամայէ բանակցիմք, կըսենք Վեհ.  
 կաթուղիկոսին : Այս բանակցութեան համար  
 պատգամաւոր զրկելու հարկ չկայ, Յանձնա-  
 ժողով մը բաւական է զայն կատարելու համար  
 կարեւոր ըսելիք մ'ունէի, որ վրիպեցաւ իշո-  
 ղութենէս, բայց ահաւասիկ կը յիշեմ :

Ազաբէկեան էֆ. կըսէր քիչ մ'առաջ թէ՛ Վեհ.

կաթուղիկոսը շատ կը սղափկցնէ այս ժողովը՝  
 յորմէ ինք ընտրուած է :

(Ընդմիջում Պէկեան էֆ. ի կողմանէ :)

Թէեւ այս երեսփ. ժողովը չէր, այլ իւր նա-  
 խորդն էր ընտրողը, բայց եթէ Վեհ. կաթու-  
 ղիկոսը իւր քովէ այս տեսակ եկեղեցականէ ու  
 աշխարհականէ խառն երեսփ. ժողով մ'ունե-  
 նար, — չզիտեմ թէ պիտի գայ այդ օրը որ ու-  
 նենայ — եթէ կըսեմ Պարսկաստանի, Հնդկաս-  
 տանի Հայոց ներկայացուցիչ ժողով մ'ունենար  
 իւր քով թերեւս այս տեսակ խնդիր ու խտիր ե-  
 բեւան չէր ելնէր, եւ եթէ դանդաղէր ալ մե-  
 ղի դէմ, իւր դանդաղը իրաւացի կը լինէր,  
 վասն զի եկեղեցիէն բղխած կը լինէր : Բայց հի-  
 մա չեմք զիտեր թէ Ռուսաստանի մերազնէից  
 կարծիքն ինչ է, թերեւս անոնք ալ կըսեն,  
 կեցցէ՛ Տաճկաստանի Հայոց Ընդհ. ժողովը որ  
 առանց խորութեան էջմիածնի եպիսկոպոս մը  
 Սոյ կաթուղիկոս ընտրել տուաւ, Բայց ո՞ւր է  
 Վեհ. կաթուղիկոսին այդ ժողովը :

Այս պահուս Պէկեան էֆ. բարձրաձայն ա-  
 տենաբանին խօսքը կ'ընդմիջէ, իրենց մէջ բա-  
 նակուիւ մը կսկսի. բայց Փափազեան էֆ. իւր  
 ձայնը կը բարձրացնէ եւ կսկսի շարունակել :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.— ( Ա. Պէկեան էֆ. — Գլխի-  
 շէլ է Խոսք ) Այս — ըր լսեցիր քեզի պէս վարձ-  
 կաններուն ջիղերը կը դողացնէ :

Ունկնդիր ժողովրդեան կողմանէ ծափահա-  
 հարութիւն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Գարձեալ կը հրաւիրեմ ըզ-  
 ձեզ, Փափազեան էֆ. դորձածած բառերնիդ  
 կշռեր —

ՊԵՂԵԱՆ Թ. ԷՖ.— ( Յ. — Գլխի — ) Ես վարձկան  
 մը, մասնիչ մ'եմ եղեր, ուրեմն անարժան այս  
 ժողովոյն մէջ մտնելու : Կը բողոքեմ Փափազ-  
 եան էֆ. ի դէմ, թող այս ամբաստանութիւնը  
 հաստատէ, թող պատասխանէ :

Ժողովոյ մէջ յուզում մը կսկսի, բարեկար-  
 դութիւնը կը վրդովի : Օրն ալ արդէն տարա-  
 ժամած լինելով՝ տատանը կը վերնայ ժամ 10ին :

ԱՏԵՆԱՊԵՏ  
 ՏԻՎՐԱՆ ԵՈՒՍՈՒՖԵԱՆ  
 Բ. ԱՏԵՆԱՊԵՏ  
 Պ. ՊԱՌՆԱՍԵԱՆ

51091 5 618

ՏՐՈՒՄԵՏՍ ԵՎՄԵՐԱՅ ԵՎՄԵՐԱՅՍՏՅԱՆ

Վասն ք զվ ձ . յանդազ յապոյտաթ մտտաճաւով ք վ յայն ք զ  
 յղկնայնայ բաժնիք թից



ԴԻՆ 2 ՂՐՈՒՇ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՍՆՏՈՒԿԻՆ

Կը ծախուի ի Դիւանատան Պատրիարքարանի , և կը գտնուի  
Եկեղեցեաց բանկալները :